

Տնողք զաւելններուն վրայ կը գրեն ,  
ՏԱՏՐԱԿԱՅ ՏԱՊԱՆ .

մայր մըն ալ իր միածնին ,  
ԻՄ ՄՕՐՍ ԱԶԱՅ ԵՒ ՄՐՏԻՍ ԼՈՅՍ  
ԹԸՌԻՐ, ԵՆՆԵԱԿ, ՅԱՐԵՒԴ ՅԻՍՈՒՍ :

Մ՛Տ, որ մէկն յիշեմ . ահա կարդացողին աչքէն արցունք մը կ'իջնայ , և ընկած տեղը՝ կնդրկի պէս ցամքած սուրբ արեան կաթիլ մը կը թրջէ :



Պարթէնոն :

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ պէս անմոռանալի երկրի մը աւերակներն ալ սիրելի են այն ամէն հնասէր և ուսումնասէր անձանց՝ որ գիտութեանց ու գեղարուեստից համը քիչ շատ առած են . բայց այսպիսի եռանդեամբ վառուած ճանապարհորդն ալ հիմակուան ատենս երբոր Յունաստանի քաղաքները քայլէ , խիստ քիչ բան կը գտնէ իրեն եռանդեանն ու այնչափ համարմանը արժանի :

Ընդ այստեղիս հնութիւններուն կամ աւերակներուն մէկն է Պարթէնոն ըսուած կիսակործան կռատունը՝ Լաթինքի միջնաբերդին մէջ , բարձրկէկ լեռան մը ծայրը . և անոր հիմակուան տեղն է աս պատկերիս մէջ երեցածը :


Լաթինացւոց ծաղկած ժամանակները , երբոր գեղարուեստները վերջին կատարելութեան հասած կը սեպուէին Յունաց մէջ , Պերիկղէս աս կռատան շինուածքին ձեռք զարկաւ ՚ի պատիւ Լաթինաս չաստուածուհւոյն՝ որ Լաթինքի պաշտպանը սեպուած էր , և միանգամայն աստուածուհի գեղարուեստից . և որովհետև Պարթէնոն մականունն ալ կուտային իրեն , անոր համար կուստունն ալ Պարթէնոն ըսուեցաւ :

Յունաստանի խիստ երեւելի ճարտարապետներն ու արձանագործները իրենց վարպետութիւնը թափեցին աս շէնքիս վրայ . ճարտարապետներն էին Վիտինոս և Կալլիկրատէս . Փիդիաս արձանագործն ալ իր սքանչելի փորուածքներովը զարդարեց մեհեանը :

Պարթենոնի երկայնութիւնը արեւելքէն արեւմուտք 221 ոտք է , լայնութիւնը 94 . ձեւը ուղղանկիւն , չորս ճակատն ալ ութնական սիւներով սրբահանք , ամէն մէկ սեան բարձրութիւնը 32 ոտնաչափ , և ամենէն մեծ տրամագիծը 5 ոտնաչափ ու 6 բլթաչափ : Մեհեանին մէջտեղը ուրիշ երկու կարգ սիւներով պատած տեղ մըն ալ կար , և հոն էր Լաթինասայ հռչակաւոր արձանը որ Փիդիաս շինեց էր ոսկիէ ու փրղոսկրէ : Ըստ արձանը ոտքի վրայ կեցած էր , ձեռքը տեղ , գլուխը սաղաւարտ , կուրծքին վրայ Սեդուսայի գլուխ մը փղոսկրէ , ոտքին քովը վահան մը , պատուանդանն ալ փորուածքներով զարդարած : Բոլոր շէնքը ճերմակ մարմարիոնէ էր , դիրքն ալ բարձր ու ձեւն ալ գեղեցիկ ըլլալուն՝ շատ փառաւոր տեսք ունէր :

Մեծին Կոստանդիանոսի ժամանակը կամ քիչ ատեն ետքը աս մեհեանը եկեղեցի օծուեցաւ . բայց ( )ամանցիք երբոր Յունաստանի տիրեցին , ան եկեղեցին ալ մզկիթ ըրին : Սենտկեցիք 1687ին ( )ամանցւոց դէմ պատերազմի ելլելով՝ Յունաստանն առին . Լաթինքի պաշարման ատենը մէկ ուումը մը գնաց Պարթենոնի վրայ ընկաւ . և որովհետև ( )ամանցիք հոն պահէր էին իրենց վառօդը , բռնկեցաւ ան գեղեցիկ շինուածքն ու մեծ մասը այրեցաւ : Բէօնիկամարը անունով շուետը՝ որ Սենտկեցւոց զորավարներէն մէկն էր՝ ուղեց որ տաճարին ճակտէն Լաթինասայ արձանը վերցընել տայ . բայց հանողներուն ձեռքէն վար ընկաւ արձանը՝ կտոր կտոր եղաւ :

Ըստ դարուս սկիզբները Լաթինացւոց դեսպանը , որ էր լորտ Սելին , ( )ամանցւոց տէրութեան առջևը պատիւ ունենալով , մանաւանդ Եգիպտոսը Վաղղիացւոց ձեռքէն ազատելու համար ( )ամանցւոց բրած օգնութեանը պատճառաւ , հրաման առաւ տէրութեանէն որ ելլէ ճամբորդութիւն մը ընէ Յունաստան , հին աւերակներուն պատկերները նկարէ , ու “ իրեն պիտանի



Պարթևներ :

երեցած քարերը վերցրնէ , : Ըստ հրամանն իր ուզածին պէս 'ի գործ դնելով , Պարթևներն ալ բոլոր մնացած փորուածքներն ու զարդարանքները վերցուց տարաւ Եգիպտոս . Եգիպտոս խորհրդարանն ալ քանի մը հարիւր հազար Փրանքով գնեց իրմէ ան արձաններն ու Բրիտանական թանգարանը անոնցմով զարդարեց : Երբ Եգիպտոս աս գործողութիւնը պարսաւողներ շատ եղան՝ նաև Եգիպտոս մէջ , իբր թէ Յունաստանը այնպիսի հարստութեան զրկեց . բայց ուրիշ շատ մարդիկ ալ եղան , նոյն իսկ Վաղղիացուց մէջ , որ Եգիպտոսը ըրածը գովեցին . վասն զի , կ'ըսեն , ան գեղեցիկ փորուածքները Եգիպտոսը վերցուցած չլլար նէ , կէս մը վերջի պատերազմներէն՝ կէս մըն ալ բուն բնակչաց անհոգութենէն ալ աւելի պիտի աւրուէին ու փձանային .

իսկ հիմա ամենայն ինսամով պահուած ըլլալէն զատ , կրնայ ըլլալ որ ատենով Յունաց տէրութիւնը այնչափ զօրանայ որ իր սեպհական հարստութիւնը նորէն ձեռք ձգէ՝ Եգիպտոսը պէս վահանն տէրութենէն ինդրելով : — Ենք փափաքիր որ մեր սիրելի հայրենեաց՝ Հայաստանին ալ հնութիւնները օտար երկիրներ երթան , օտար ազգաց ձեռք իյնան . քան լիցի . բայց թէ որ մեր երկրին մէջ մնալով՝ այն պատուական հնութիւններն ալ առջիններուն պէս պիտի թաղուին ու փձանան , ալ աղէկ չէ որ անոնց յարգը ճանցող ազգի մը ձեռք իյնան ու պահուին , այնպէս որ մենք ալ կարենանք վայելել ուրիշներն ալ :